

## ՆՈՐ ՆԻԹԵՐ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊՍ. ՍԱՐԱՖԵԱՆԻ ՄԱՍԻՆ

(Շար., տե'ս «Բազմավեպ» 1983, ք. 1-4, էջ 132-174)

### ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

#### 1

(Առ Բեմեդիկոսու ԺԴ. Քահանայապետ, Հոռմ)

Գեր քան զՍինայն բարձրաբերձ անմատչելի, Բէնէտիքոսի Զորեքտասաներորդի Ամենասրբազան Պապի դերընտրեցելոյ, եւ լրագունաբար ժառանգողի զմիապետական ծայրադնութիւնն եւ զգերաճոխ նախագահութիւնն կաթողիկէի Եկեղեցւոյ անլրելելոյ, եւ որքան առ հեղինակութիւն սրբոյ Հաւատոյ ուղղափառի եւ առ կարգադրումն առաքինական բարեաց գործոց՝ անսխալական վճռատուի, եւ անյեղլոյ քանոնի ուղղածրի, ստորադրեմ զիս ամենայն կերպիւ հնազանդութեամբ, եւ ի ձեռն շնորհաց Սրբոյ Հոգւոյն ճշմարտի ճանաչեմ նարդեանս՝ գոյ միակ պլուխ, զինուորեցելոյ Եկեղեցւոյն Քրիստոսի երեսլարար, նաեւ մեծաւ ըղձակութեամբ դերկնանեմ դարչապարն նորին՝ համբուրեմ խոնարհաբար:

Եւ զպատկանաւոր յարգումն եւ զմեծագոյն պատիւ համանուիրեմ հնազանդական խոնարհութեամբ սրբոյ Ժողովոյդ Սանթֆից կոչեցելոյ եւ ի ձեռն պարգեւաց ձրիականաց Տեառն Յիսուսի, ճանաչեմ զամենամիտ եւ զգերամաքուր դաւանութիւնն սրբոյ Եկեղեցւոյն Հոռմէականի, որոյ վասն զայս ձեռագիր հնազանդութեան եւ դաւանութեան ընծայեմ ձեզ ամենամիտադուստրից դերապնէից եւ բաղմաչեայ քննիչ եւ հողաբարձու կարգեցելոյ ի սուրբ Ժողովոյդ, ի ձեռն գերապատուելոյ Հերոնիմոսի Լանցա փերայիտոյ՝ Զմիւռնիոյ մեծի փոխանորդի, եւ ի ձեռն մաքրակենցաղ եղբարց Քարունճինաց, եւ յատկաբար Ստեփաննոսի Առաքելական քարոզչի եւ միափոխարի ձեռնտուութեամբ, ազգաւ հայ եւ ծննդեամբ Կոստանդնուպոլսոյ եղելոյ ի նոյնոյ կարգէ Սրբոյն Ֆրանչիսկոսի:

Եւ քանոր յաւէտ դիելով իմ զկաթնաբուղիս եւ զունտնածորան զստինան՝ ամենազերապանծ դշխոյին Թադաղնէի, այսինքն Հոռմէականի սրբոյ Եկեղեցւոյ, եւ զարգացեալ դոստ ըստ իմոց կարեաց՝ ի ձեռն այնց քաղաքից եւ մանանայից փենսունակաց, այսինքն ի ձեռն աստուածաբանական գրեանց՝ շարադրելոց ի յուղղափառ վարդապետաց սրբոյ Եկեղեցւոյն:

Ուստի ուրեմն եզրափակեմ համառօտաբար այսու կարճաբանութեամբ, ի մէջ բերելով զԱմենասուրբ Երրորդութիւնն եւ զամենայն երանելիան երկնային դաւառին, զի յայսմ հետէ ըստ ամենայնի, ամենայն կերպիւ, ի յամենայն օղուածս սրբոյ Հաւատոյ եւ ի համայն դիտաւորութիւնս, նաեւ ի մեկնութիւնս սրբոց դրոց եւ ի ծէսս կրօնականս, մինչեւ ցմահ՝ հնազանդե հոգէց Հոռմէականի սրբոյ Եկեղեցւոյ եւ նորին անսխալ Քահանայապետիցն ծայրադնոց:

Եւ ի հաստատութիւն որոյ՝ զայս գիր յատուկ ձեռամբ իմով գրեալ եւ կնքեալ յղեցաւ վեհալուստրութեան ձեռում. եւ եթէ հաճեսցի քերամեծարութիւն կամաց ձերոց, եւ եթէ վարկանիշիք ըմբոն, ի քերապայծառութենէ ձերմէ փնդրի զգիր իմն լիակատար ներողութեան եւ տնօրինման յղել առ անարդիւն ծառայս ձեր՝ ի ձեռն վերոյիշեցելոց եղբարց Քարունճինաց, եւ բերուք ողջք ի պայծառութիւն սրբոյ Եկեղեցւոյն Քրիստոսի. ամէն:

Ի Զմիւռնիւն քաղաք

Յամի Տեառն 1743, ի Յունվարի 19

Ամենանուատ ծառայ Տեառն ծառայից  
Սարգիս Արքեպիսկոպոս մեծին Կեսարիոյ  
եւ վելիաւոր Նուիրակ Սրբոյ Երուսաղէմի  
Պատրիարքին Հայոց

AP, SOCG, Vol. 715, f. 62

#### 2

(Ս. Ժողովի քարտուղար Լերֆարիի, Հոռմ)

Ընկալեալ զպատգամս Գերայդոյից հրամանաց սրբոյ Ժողովոյս՝ ի ձեռն Ազնուական տրակի Վեհալուստր Տէրութեան ձերոյ, շուրջ զպիտոյութեամբ հնաբելոյ զոմն եպիսկոպոս ունող զյարմարական թէութիւնս, առ ի լինիլ փոխանորդ ձեռնադրող Մօնսինեօր Վրդանիսին, վասն մանկանց ձեռնադրելոց ազգին Հայոց ի Հոռմ, Արքեպիսկոպոսն Կեսարիոյ Սարգիս Արքեպիսկոպոսն, յօժար կամօք յանձն առնու ծառայել Սրբազանի Ժողովոյս, ոչ միայն գրելով ի զանազան տեղիս, այլ եւ մանաւանդ հաղորդակցելով զսոյն իսկ հրամանատուութիւնս Մօնսինեօր Մինաս Եպիսկոպոսին, որ է ի Վնէժ, զի ո-



դապետն, եւ իւր հետեւող Արիմանեան Տէր Թովանէան, զի Տէրութիւն քո հրամայեաց յանցեւորման ի վերայ վերոյդրեպոցն եւ ալոց ոմանց կարգաւորաց զնալ ի յաւուրս կիւրակէից եւ Ֆեատից ի յեկեղեցին, եւ ըստ կանոնի Հայոց ասել զսովորական ժամն, բայց նոքա, թէպէտ բազում անգամ խրատեցեալ յինէն եւ ի Սարգիս Եպիսկոպոսէն, ոչ յառաջն զնալի(ն) եւ ոչ յետոյ կամեցան զնալ, զանց արարեալ զհրամանօք Տէրութեան քո. եւ ես անկար գոլով՝ ոչ կարեմ յառաջ տանիլ զհրամանն դայն, զի իւրաքանչիւրքն սոքին ասեն. մեք եմք եւ ոչ այլ ոք գոյ, զի խօսին զոր կամին, եւ առնեն զոր հաճին:

Ուրեմն յայժմ համարօտեալ դայս միայն կամիմ ծանուցանել Տեառնդ, զի եթէ վասն այսպիսի համբաւաւոր անձին, որ իբր արուեստէ արտալ մի ցօլանայ ի մէջ աղբին մերում, գոլով եւս հոգակաւոր Արքեպիսկոպոս եւ աստուածաբան վարդապետ, եւ ունող բազում աշակերտաց, որ եւս վասն ուղղափառութեան թողլով զամենայն փառս եւ զպատիւս ինքնին կամաւ իւրով դիմեալ է աստ, հանդերձ կրելով եւս զանազան հարածանս, որպէս յայտ է ամենեցուն, տակաւին այսու ամենայնիւ զտանիցին աստ աշխարհի նախանձալլուկ ալք, որք ի նախանձու կուրացեալք կամիցին արատաւորել զբարտաւրութեամբ եւ քարոզարանօք զհամբաւ այսպիսի բարեբաւոյ առնս, որ աշխարհն հաստատ վկայութեամբ մեծամեծ արանց, թէ՛ ի Կոստանդնուպօլսոյ, եւ թէ՛ յայլ ուստեղէ, եւ եւս է վէնէժոն:

Ահա վերջ առնեմ եղբայրակելով այդոքիկ բանք, զորս ասացեալք են զառնէ վերոյ գրեցելոյ, քահանայիւ(ք) եւ ժողովրդօք վկայեմ եւ ստորագրեմ՝ պարզ զբարտաւրութիւն գոլ: Եւ խնդրեմ քի քէն, զի զնոյն ինքն զՍարգիս Եպիսկոպոսն առ քեզ կոչելով տեղեկասցիս ի նմանէ, թէ վասն քո իցէ հնարեցեալ քի նոցանէ այս բարուրանքն, որ եւ կարծեմ թէ լսելով քի նմանէ զբազումս հիւանդիս, եւ Տէրութիւն քո զարմանալոց իցէ, զի ոչ է որպէս զնոսա տառասց եւ զբարտաւրիչ, այլ ճշմարտաբան եւ հաւատարմոս:

Եւ մինչ ծանիցիս զճշմարտութիւն իրին, աղաչեմ ծերութեամբս, չթողուլ զայնս ստահակս թարց պատժոյ, եւ ազատեցես զիս եւ զմայինս եւ զայս տունս ի բռնաբարոյրութենէ (sic) նոցին, զի բոլոր սողն մեր՝ մինչ յամենայն ուրեք լսեն այսպիսի անկարողութեան արարքս՝ չիթիին եւ վրդովին, եւ զուցէ պատժելովդ զնոսա՝ չինեացին. քանզի այնք ապտամբք այսու չար վախճանաւ զայսպիսի անտեղիութիւնս առնեն, զի մի՛ ոք քի նշանաւորաց արանց աստ բնակեացի, այլ բնակին վերեանց կարօտք չիցին:

Vartanes di Stefani  
Arcivescovo di Cesarea  
in Cappadocia

(Տ. Կ.)

- 1) Ես Յակոբոս Մեսրօպ Եպս. Հայոց, մինչ հարկաւորեալ եղէ ստիպելով քի արբազան մօնսինեօր հօրէ մերմէ վրդանէս Արքեպիսկոպոսէ. ուստի պարտ իսկ եմ զճշմարիտն առաջի Աստուծոյ խոստովանիլ, զի ամենեւին անտեղեակ եմ այն արգուհալէն եւ քի զանկատանացն՝ զոր զբարտաբար արարեալ են վասն Սարգիս Արքեպիսկոպոսին Կեսարիու, մեր Սրբազան Հայր Կարտինարին, եւ մանաւանդ շնորհակալ եմ զնմանէ ըստ ամենայնի, այսպէս վկայեմ:
- 2) Ես Տէր Նիկողայոս քահանայ, մինչ հարկաւորեալ...
- 3) Ես Ներքոյ գրեցեալս, մինչ հարկաւորեալ... Ես անարժան քահանայ Յովսէփ Գրիգորեան եւ սաղբիտան սրբոյ եկեղեցւոյն Մարիամու Եպիսկոպոսին, այսպէս վկայեմ:
- 4) Ես Ներքոյ գրեցեալս, մինչ հարկաւորեալ... Ես անարժան քահանայ Ստեփաննոս Յակօբեան, այսպէս վկայեմ:

AP, SO, Armeni, Vol. 11, ff. 440-441

#### 4

Գերապատուեցելոյ Վեհալուստեր Տեառն  
Տեառն Սարգիս Արքի Եպիսկոպոսի Կեսարիոյ

Յիսուսաւանդ ողջունիւ եւ մեծաւ յարգութեամբ վերադարձեմ զտրակն ողջունի իմոյ առ վերագրեցեալ վեհանձնութիւնդ: Ասացի վերադարձեմ, զի յինն Ապրիլի գրեցի առ վեհանձնութիւնդ զիրաց ոմանց եղելոց ի Կոստանդնուպօլսոյ, եւ զայլոց նմանեաց, եւ մինչեւ ցայսօր, որ է քահանութ Մայիսի, զպատասխան ինչ ոչ ընկալայ: Եւ թէպէտ ի նմին աւուր գրեցի նաեւ զգիր մի առ Ստեփաննոս վարդապետն, որ էր պատասխան գրոյ իւրոյ՝ յորում խնդրեալ էր քի մէնջ, զի եթէ ունիցիմք զգիրք ինչ, յորում իցեն գրեցեալք զպահոցն Հայոց թէ յորոց հեղինակաց իցեն եղեալք, զնոյն գիրքն յղեցեմ ինքեան՝ զի թարգմանել կամի ըստ խնդրոց ոմանց, եւ ես պատասխանեցի նմա, թէ ոչ գոյ ի մեզ այնպիսի գիրք: Նաեւ գրեցի ի նմին աւուր զգիր ինչ առ պատեւրահան եղբայր Թօհաննէսն, յորում խնդրեցի քի նմանէ սակաւ ինչ զպոօխուլի խոստոյ հունս: Արդ՝ պատեւրահան Թօհաննէս եղբայրն իսկոյն պատասխանեաց ինձ, թէ յորժամ ալքր եկող լինիցի, առաքեցից: Փսկ Ստեփաննոս վարդապետն ոչ պատասխանեաց, զի իմ գիրն էր նորին գրոյ պատասխան, եւ ինքեան ոչ էր պարտ պատասխանել: Այլ ըստ որում ինձ երեւիւր, յուսայի թէ բարձրութիւն քո պատասխանիցէր. քայց մինչեւ ցարդ անցին եօթն շաբթք, եւ ոչ ընկալայ քի քէն զգիր ինչ:

Արդ՝ երկոտասան առուր յառաջ յանկարծ լուսյ ի գերապատիւ Մինասայ արհի եպիսկոպոսէն, թէ այդը զչփոթութիւն ինչ յարուցեալ են ընդդէմ վեհալուստրութեան քոյ, եւ հիացեալ զարմացայ եւ ափէցայ, եւ հետեւաբար յոթ ցաւեցայ, զի անուն ազգին մերոյ ի յայսպիսեաց անկարգ գործողութեանց առաւել յանդարի եւ ապականի, թէպէտ ամբաստանեցեալն Վեթ՝ համբերութեամբ տարցէ զղուր ամբաստանութիւնն, մեծեղապէս արդիւնաւորի: Արդ՝ եւ մինչ լուսյ զայսոսիկ, էի ի հիւանդութեան եւ այժմ շնորհիւ Տեառն փոքր ինչ առողջացայ, ուստի համառօտիւ գրեմ նախ զայս. յոթ շնորհակալ եմ զՏեառնէ մերմէ Յիսուսէ Բրիտոսէ, որ ի ձեռն շնորհաց իւրոց ցուցեալ է զանմեղութիւն քո Սրբոյ Ժողովոյն, եւ իսկոյն արդարացուցեալ է զքեզ ի յայնց ամբաստանութեանց: Երկրորդ՝ ասեմ զայս. զի ես աստէն յոմանց անձանց լուսյ զոմանս բանս, յորոց երեւիւր, թէ վեհալուստրութիւն քո զկարծիս ինչ կալեալ է զմէնջ՝ իբրեւ թէ մինչ ի Ստեփաննոս վարդապետէն զգիր քնկալաք եւ գրոյն պատասխանեցաք՝ իցեմք տեղեակք, եւ կամ մասնակիցք ամբաստանութեանցն հեղիոց զքէն. զորմէ նաեւ Վեթ երեւակերպեալ իցէի, ծալբազունեղ խնդարութիւն եւ անիրաւութիւն յինիւր ինձ այն: Եւ զի ոչ գրեմք քո առ իս զպատասխան գրոյս իմոյ, նաեւ ոչ գրեմք քո զայսքանեաց փորձութեանց, որք հանդիպեցան քեզ, առաւել հաստատեաց զկարծիս մեր, թէ վեհալուստրութիւն քո զմեզ ամբաստանողաց իւրոց համաձայն կարծէ, որ քա՛ւ լիցի ըստ ամենայնի եւ ամենայն կերպիւ: Արդ եթէ ո՞ր գիտէ, եղեւ ի քեզ յայսպիսի կարծիք զմէնջ, կարող ես ի բաց բառնալ ըստ ամենայնի, եւ հաւատալ քանից դրեցելոցս, զորս գրեցի ճշմարտութեամբ ըստ ամենայնի: Իսկ եթէ ոչ կամիցիս, կամ ոչ կարիցես բառնալ զկարծիսդ, ես, ըստ ամենայնի, շնորհիւն Աստուծոյ, զբարին քո կամիմ, Վե սիրեմ ըստ ամենայնի ըստ պատուիրանացն Աստուծոյ, եւ մեծաւ յարգութեամբ պատուեմ ի փառս նոյնոյ Տեառն: Այժմ ի տկարութենէս նորապէս եւ սակաւ ինչ հազիւ առողջացեալ եմ, մասն որոյ զսակաւս զայս գրեցի: Բաւ է. ողջ լեր ի Տէր:

Յամի Տեառն 1746

ի Մայիսի 28

Վեհալուստրութեան քում

Նուստադոյն ծառայ Միխիթար

Արքայ Հայր

ի ձեռն Գերապաթառի վեհալուստեր

Տեառն Տեառն Սարգսի Արհի Եպիսկոպոսի

հասցէ ի բարին:

ի Հռոմ

S. Maria Egiziaca

degli Armeni

Roma

(Նամականի Տեառն Միխիթարայ Արքայի, Թիւ 820)

## 5

(Առ Ս. Ժողովն, Հռոմ)

1. Առաջին գիրն յանձնարարական, զոր Գերերանցեալ Պապն գրելոց է առ Նունցն Վէնէտիկոս, խնդրեմ զի ունեցի (sic) զայսոսիկ ղիտաւորութիւնս:

Նախ՝ զի Զանասցէ նոյն Սրբազան Նունցն, հաճեցուցանել զկամս Գերազանց Տօճին, առ ի պարզեւել ինձ զաւելորդ եւ զհնազոյն կըղղեակ եւ կամ զվանք մի, առ ի լինիլ վանք եւ ուսումնարան Հայոց, եւ այն՝ եթէ կամեսցի Ծերակոյտն:

Երկրորդ՝ զի նոյն Նունցն խնամարկու լիցի ըստ ամենայնի, եւ մանաւանդ սակա տպագրելոյ զգրեանս ոմանս ուղղափառականս:

2. Երկրորդ գիրն յանձնարարական, զոր ըստ խնդրելոյն Սըրբազանի Պապին տալոց է ինձ աստ Պաշտօնն Վէնէտիկոս, առ Գերամեծարելի Ծերակոյտն իւրեանց՝ ունեցի զղիտաւորութիւնն՝ որպէս առաջնոյն:

3. Երրորդ յանձնարարական գիրն, զոր տալոց է Սուրբ Ժողովքն վասն իմ առ նոյն Նունցն, ունեցի զղիտաւորութիւնս վերոգրեցելոցն: Բայց յատկացուցի ի մէջ սոյն գրոյս՝ այս բան հետեւեցեալ՝ թէ տպագրեցելոց գրեանց քննութեանն՝ ոչ ոք ձեռնամուխ լիցի, բացի Սրբազան Նունցէն: Սակայն տպագրեցի հրամանաւ Ծերակոյտին:

4. Չորրորդ գիրն յանձնարարական ի Սրբոյ Ժողովոյն՝ լինելոց է առ Մօնսինեօր Մինաս Արքեպիսկոպոսն: Ունեցի զհետեւեալ ղիտաւորութիւնն, որ է այս, թէ ահա ի քեզ յանձնեմք, զի օգնական լինիցիս բարի ղիտաւորութեանն սորին, որպէս եւ երբեմն գրէիր առ մեզ: Մանաւանդ խնդրեմք զի ձեռնառու լիցիս տպագրութեան գրեանց: Բայց եթէ կամիցի Վսեմամտութիւնն Մօնսինեօր Լերքարին՝ յիշեցէ եւս զտպագրութիւնն Կալսինն, զի գուցէ եւ նա օգնեցէ առ տպագրումն նորին գրամօք:

Եւ զայլս յանձնելիս թողում խոհեմութեան ձերում:

Սարգիս Արքեպիսկոպոս Կեսարիոյ

ի Հռոմ

յամի Տեառն 1746, և ի Սեպտեմբերի\*

AP, SO, Armeni, Vol. 11, f. 579

\*) Կը պակտի օրոշան թուականը:



Ուրեմն զայս խորհրդապէս յանձնեմք հողալ ըստ խորհմտանաց : Եւ զի մի՛ գուցէ զգիր իմն հրամանի առցէ ալդի ի Կարտինալ Վիքա-  
րոյնէն, որպէս Եւ պանծացեալ է առնել՝ ծածկապէս զընցաւ. ողջ լեր  
ի Տէր :

Գրեցաւ ի Վէնէտիկ, 1746, ի Դեկտեմբերի 17

Սարգիս Ալեքսանդր

Արքեպիսկոպոս Կեսարիոյ Կապադ. Հայոց

Մինաս Փէրուզեան

Արքեպ. Իզմիրոնոյ

AP, SO, Armeni, Vol. 11, f. 589

# 8

Մօնսիներ Լէրքարի Վսեմազնեայ պայծառութեանն

Տէրունական ողջունել յայտարարութիւն

Ժամանեաց առ իս ուրախարեր զիր Վեհանձնութեանդ, զընցեալ  
ի Փետրվարի 4, եւ զմեծ շնորհակալութիւն ունիմ զՏեառնէ, որ ըղ-  
վսեմախոհ Պայծառութիւնդ պարգեւեաց ինձ ի ճշմարիտ բարեկա-  
մութիւն, որ ես նոյն Տեառն իմ (sic)՝ որպէս թաղ ի զլիսի փմում պա-  
հեցէ զքեզ պերճացեալ փառօք :

Նաեւ վասն Կալանի զընեանց տպադրութեանն յառաջացման ըղ-  
ձակերտեցեալ ես՝ ի լուսաւորութիւն մնացորդ հերետիկոսաց ազգի  
մերում, որ եւ պնդան ըղձամք եւ մեք : Ուստի յուսամ ի յամենառատ  
բարութիւնն Աստուծոյ, որ պնդու յառաջ՝ յաջորդութեամբ ոմանց  
ժամանակաց, շարժեցէ զսիրտս ոմանց բարեպաշտ վաճառականաց  
ազգի մերում, առ ի վարիլ ի տպադրութեան այն օգտաւէտ գրեանց,  
ոչ խնայելով ի տալ զծախս պիտոյիցն : Եւ ես ըստ տեղւոյն եւ ըստ  
ժամանակին՝ որքան կարեմ, ոչ պակշտեմ ի ստիպելոյ զնոսա առ  
այս հոգեւոր խորատաքանութեամբ :

Որպէս եւ ահա արդէն վասն Անդոնայոյ Հայոց եկեղեցւոյն, որ  
ունէր 120 տիւղք պարտք, ըստ խնդրոյ մեր Հայոց՝ Գերագանցապետ-  
նեղ կարդինալ Կառաֆային, յորդորեալ զԺողովուրդան՝ զայն պարտան  
վճարեցի, առ ի ախուհետեւ բանիլ եւ պայծառ մնալ այն Սուրբ  
Եկեղեցին :

Բայց Աստուած շնորհ տացէ ոմանց խռովարար եւ վրդովիչ ա-  
րանց քանսարկուաց, որք ոչ բնաւ դադարին ինքեանք, եւ ոչ կամին  
զի եւ ալք դադարիցեն : Որպէս եւ աթմ, այն հնազոյն նենդազործն,  
որ կոչի Տէր Յօհաննէս Արիման քահանայ, ոչ բաւականաւորով այն-

քանիւք զորա արար՝ մինչ էր յայդր, եւ զայնքան՝ զորա առնէր աստ,  
յաւել ի վերայ ամենայնի յանդէնիլ ի ձեռն սուտ դրոյ, ամբաստա-  
նութիւն առնել զինն առ Գերզն. Սուրբ Ժողովն, իբրու թէ՛ ոչ  
տուեալ ինքեմ յառաջ եւ կամ յաթմա՝ ոչ կամեցեալ ինքեմ տալ նմա  
զվկայական զիր ինչ, որով հաստատիցի ձեռնադրեցեալ քահանայ  
զոյն, զոր մի՛ արասցէ Աստուած, թէ՛ պոնէ մտածեցեալ ինքեմ երբեք :  
Քանզի պարզապէս զիտեմ, որ տուի նմա ի Գաղատիայ զայն վկա-  
յականն : Եւ եւս քնաւ երբեք, որքան կացեալ եմ ի Հոսմ եւ կամ թէ  
աստ ի Վէնէտիկ՝ նա չէ խնդրեալ եւ յիշեալ զայնպիսի վկայական  
զորոյ պահանջումն, ոչ միջնորդաբար եւ ոչ թարց միջնորդաց, որ-  
պէս յայտ է Աստուծոյ ամենաճշմարտի :

Բայց թէ հարցանիցէ, վասն է՞ր դադեալ (sic)՝ զայն իւր [612p]  
վկայական զիրն կամեցաւ աղաղակել առ Սուրբ Ժողովն, պատճառքն  
են հետեւեցեալք, նախ զի արատաւոր եւ անպատիւ ցուցցէ զիս ա-  
ռաջի Սրբոյ Ժողովոյն, որպէս եւ երբեմն կամէր : Երկրորդ՝ զի այ-  
նու միջոցաւ կամիցի ընկալնուլ զգիր իմն միսիոնարութեան, եւ մա-  
նաւանդ առ ի լսել զխոստովանութիւն, զի ընկալնով զայնպիսի զիր  
ի ձեռին՝ դարձեալ վերստին սկսեցի վրդովել զտեղիս, հետեւելով  
քաբելանութեան, ապաւինեալ ի լիպէրթաութիւն տեղւոյս : Բայց որ-  
քան առ իս՝ ծանուցանեմ միայն՝ եւ ոչ հրամայեմ, զի ըստ ամե-  
նայնի նա է անպատիւն այն պաշտօնին մեծի, այսինքն միսիոնարու-  
թեան, եւ այս առ ի պայծառ պահել անուն Սրբոյ Ժողովոյն : Եւ  
այսու ամենայնիլ ի բարեհաճ կամաց Ժողովոյն կախեցեալ կայ, ա-  
րասցէ որպէս եւ կամեցի :

Բայց առ ոտս ձեր անկեալ աղաչեմ, զմեզ անմեղադրելիս պա-  
հել որքան առ այս, զի զիտելով իմ տուեալ նմա յառաջն, սակայն  
առ ի ըստ ամենայնի հնազանդ գտանիլ հրամանաց, վերստին զայլ  
իմն գրեալ վաղվաղակի ետու ի ձեռն նորին :

Վերջին պատճառ, եթէ չունէր նա ի ձեռին զգիր վկայական,  
որով բանիլ ի Հոսմ ընդունեցեալ եղեւ իբրու քահանայ եւ կացուցաւ  
խոստովանահայր Հայոց :

Ուրեմն զայսոսիկ զամենեւեան, խոնարհաբար յանձնելով քումդ  
վսեմականի ենթադատութեան, մնամ պատրաստական ծառայ գերա-  
փառութեանդ՝ ըստ ամենայնի :

Ի Վէնէցիայ, յամի Տեառն 1747

ի Փետրվարի 11

Սարգիս Ալեքսանդր

Արքեպիսկոպոս Կեսարիոյ Կապադովկացւոց

AP, SO, Armeni, Vol. 11, f. 612

## 9

Տեառն Տեառն Ստեփաննոսի մաքրակրօն Աբբայի

Յիսուսաճիր սիրով ողջոյն ընծայեմ ի Գրիստոս Յիսուս

Ծփանք Վենցաղականի մրրկանաց ցայս վայր արդէն հասուցեալ զիմն թափառական կացութիւն, ոչ գիտեմ թէ առ ուր գիցէ յանկուցանել ախուհետեւ չուառապէս: Վասնզի եթէ Տեառն փցեն տնօրինեալ կամք, ի վաղիւ իսկոյն ի նաւ իմն ելեալ հօլանդերեան, ակն ունիմք նաւարկել մանաւանդ լիաշնորհ թուշարանօք ձերային աղօթից, քան թէ յաջողակ հողմով Եւքանօտոսի շնչման: Յաղազս որոյ յետ զբարեաւ մնայն իմ ասելոյ գերբնտիր վեհանձնութեանդ, ընդ քեւ եղեալ յարգեցելովք հանդերձ՝ ցաւաղնապէս, ապաստան լինիմ ի ձեր մախթանաց օժանդակումն բոլորովին, որոյ արժանաւորիլն ձիր իմն մեծ համարեալ լինի առ իս, թէեւ անարժան իցեմ ինքնին լրիւ:

Եւ թէպէտ զՅարգեցելոյդ ողջունագիր կանխաւ ընկալայ մահտեսի Մանուկ պատուելոյն գոլով ի Հոռօմ, այլ կիրք ճանապարհորդական ժխորմանց բռուն արարին չգորել առժամայն դառանել համապատասխանօղ, զոր եւ զսա ընդ այլ իմոց ամարդական բարուց քնականաց՝ յուսամ ներման արժանացուցեալ՝ ոչ եւս երբեք էք յիշեցելոց, եւ գուցէ լստ քարեմտութեան ձերում իբր զերախտադէտ ոք եւ զմտերիմ ի յիշողութեան ձերում պահելոց, եւ թերեւս մերթ ի ձեռն շնորհալի գրոց ձերոց մխիթարելոց:

Եւ եթէ կամք իցէ ձեր հարցանել գէր վասն չթօարելոյ իմ մնալ ի Հոռօմ, ոչ կարեմ առ այս այժմ մասնաւորաբար պատասխանել, զի ունի զբազմադան պատճառս բանաւորագոյնս. բայց գիտացէք զիս յաւէտ ուրախագոյնս վասն ոչ մնալոյս անդ եւ գնալոյս ուր աճապարեմք արդէն: Որոյ վասն կացիք բարեաւ ստեղծով վերատին, խընդրեմ ի ձէնջ թիկնահաս լինել աղօթիւք:

Եւ եթէ աւարտեալ իցէ տպագրումն Լօմիգայի Կովդիմի, աղաչեմ ոչ մոռանալ զմինն առ իս առաքել սեաւ կապով, յիշմիր, ձեռամբ Կարնեցի Պարոն Նահապետին, եւ հետեւապէս գլխին հատորն բնազանցական, զի զայլ երկունն ընկալեալ եմ:

Ամենայն միաբանից սրբակրօնից, որք առանձնացեալք կան ի սրբարանդ, սիրով եւ կարօտիւ ողջոյն ընծայեմ եւ յատկապէս իմ Հայր Մկրտչին պատուականի, եւ սպասեմ տեսանել զնա ի բնուն իսկ հայրենին մեր ի Բիւղանդ, եւ մի՛ զանդիտեցէ բնաւ, զի առանց հրամանի Սրբազանիդ զոչինչ առնեմ նմա. բաւ է:

Ի Լիւթոնօ, 1754 ի յԱպրիլի 22

(Դիւան Ս. Ղազարու)

Սարգիս Վրդ. եւ Արքեպս.

Կոստանդնուպօլսեցի

## 10

Գերամեծար Տեառն Յակոբայ Արհիպապանձ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ եւ մեծահռչակ աստուածաբան Վարդապետի եւ քարոզչի, մեծաւ խոնարհութեամբ ողջոյն ընծայեմ ի Հոգին Սուրբ:

Զինի որոյ յայտ լիցի մեծութեանդ, զի միջոցաւ ԻԲ (22) ժամուց մնալով ի Ծովու, թարց ձախորդական լիւրից ինչ ժամանեցաք ի նաւահանգիստն Թրակիոյ, եւ ողջամբ ընկալեալ զանարժանութիւնս շուրջառաւ տարան զմեզ յեկեղեցին. գոլով օրն չաբաթ, պահն առաւօտեան եւ սրբազան խորհուրդն պատարագին ի Սուրբ սուրբն հասեալ:

Եւ յետ երկուց քանից սովորական բարեաւ տեսաքին զձեզ, յեւրանն ածին զմեզ յառաջնորդարանն իւրեանց ի յարգել, զորմէ ունիմ զդուռնակութիւն մեծ:

Եւ ապա զինի երկուց աւուրց ի ժամանելն օրհնութեան գրոյ Սըրբազանիդ, զոր դրեցերն զմէնջ առ սոսա, ախուհի ծանուցեալ զհաւաստի խորհուրդս մեր, կուտեցան զմեօք եկեղեցականք հանդերձ աշխարհականօք, եւ թիւ զրուցից զոր արարինն ընդ մեզ անդր քան զկարծիս եղեւ: Իսկ մեք ի շուարման պարտեալ յայն վայր, առ ի առթիւ ճողոպրելոյ զմեզ ի գերդ կոյս ընդդիմադրեցաք զպէսպէս անկարելութիւն, եւ մանաւանդ պատճառեցաք զքան վեհանձնութեանդ ասելով թէ տեսէք ահա զգիր Վեհին մերոյ, յորում պատուիրեալ է ձեզ թէ զինի կատարման ուխտին իւր սլերստին առ իս յուղարկաւորեալիք զնա սիրով, եւ այլն: Առ որ ասացին ինձ. Եթէ բանն ի նա մնայ միայն, Աստուած ողորմած է, միայն թէ դու ի կողմանէ ջումմէ տուր զհաւանութիւնն ջո: Եւ զայս կարծեմ վասն այն ասացին, զի հարազատ պաշտօնեայն Տեառնդ չքմեղադուսիկն ճիհանիկ խելամուտ արարեալ է զսոսա յինչեւիցէ գին անարդ Հրամանդ յօժար գոլ ի սլաճառել զիս ում եւ իցէ:

Ի քաց թողեալ մեր գերկարաբանելն գրելով Տեառնդ զհանդամանն բովանդակ ասութեան՝ թէ զիմն առ նոսա եւ թէ քնոցայն առ իս, եւ միայն զայս զբացուցից համառօտիւ, որ իսկութիւնն իրակութեան այս եղանակ եղերեցաւ, որ թոյլատրութեամբ եւ կիսապատար հաւանութեամբ իմով սլերստին զարդ իմն գրիցէին առ Պայծառութիւն ջոյ վասն թեքրար խնդրելոյ զիս ի Տեառնդ, որպէս եւ գրեցինն իսկ, զոր տեսանես: Սակայն, աչաց իմ յոյս, թէպէտ տեղիս այս անյարմար է ինձ սակա քաղմադիմի նկատմանց, զի եպիսկոպոսարանն է իբր թէատրոն լրմբշամարտից ամենասոսկ, եկամուտն տիր տակաւուր քան զոր հաշուէաքն, գործ քարոզութեան գունհ-

կապան լինել պարտ է, եղանակն այլ Սուրբ Երուսաղեմայ եղանակին պէս ծանր է: Նաեւ ճահիլներին ոչ է սակաւ, եւ ես այլ Հրամանուցող պէս կու կամիմ որ ի բազմամբոխ աստեանի քարոզել, եւ ընդ պերճափառ ի յխանս նստել եւ ընդ բանադէտս խօսակցել եւն: Քանզի եւ մեք քեզ նման կարեօք մարդիկք եմք, լաքին թող քո օրհնեալ կամքն լինի, ըստ որում կամեցար ի վաղուց, մէկ՝ որ Հրամանաւոր գերծանիս ի ծանրութենէ մերմէ, եւ մեք յինթինանէ ջուժմէ, քանզի սոյն հաւանութիւնս է այնպէս որպէս թէ ճանճ ոմն բռնադատիցի նստիլ ի տոպրակն մածոնոյ առ ի գնալ ի գլուղ ինչ: Եւ մի միայն իր գոյ առ սոսա, որ խաթարէ եւ լաւարարէ զխղճատանս իմ ի տեսանելն եւ ի բաւն, ախրնքն կարծեալ թէ (ո՛հ եւ աւար ինձ), ես իցեմ այն որ երեւիմ եւ յորջորջիմ. վասն որոյ աղաչեմ եւ կողկողան զի յանձն աստուցում զգործս զայս առաջնորդութեան, չգիտելով պարզամիտքս այսոքիկ թէ ես ինքնս տակաւին կարօտիմ ունիլ դառաջնորդ յասպարէզս հոգեւոր ընթացից: Ուստի ամիշեալ իմ որքան առ այս՝ կիսահաւան եղէ խնդրուածոց նոցին, եւ թողարարեցի գրել զարդն զայն. նաեւ գրեցի առ մեծութիւնդ եւ ինքնին զսոյն գիր հաւանութեան, բայց հետեւեցեալ թէ ուրեքամբք, զորս արարեր ընդ իս նախապէս:

Նախ մոխաթայի բանն հաստատ առնել ի ձեռն գրոյ, եւ ոչ թէքլիֆ չունիմք քո հետն ասելով ի կախ ըմբռնման տալ: Երկրորդ, այն բաժանած թեմերն վերստին ի վերայ սոյն առաջնորդութեան կայացուցանել, եւ ի կոնդակին յատկապէս գրել յանուանէ: Երրորդ, Յակօք Վարդապետին համար պույուրթմիշ արած զարդդ գտանել՝ որ մեր նախկին պէրաթն հաստատ լիցի, եւ կամ Եթէ նորա ի ձեռք գալն դժուարին իցէ, զնորա մէկ հաստատագոյն սպեղանին հնարել, որ ճումպալը եւ մուղաւայ չլինի բանն յետոյ: Եւ վերջապէս զսիրտդ ուղիղ պահելով դէպ առ իս օժանդակ լինիլ ինձ միշտ յայս գործ դժուարակիր, զի թէ՛ Հրամանաւոր եւ թէ անարժանս չիցէ թէ ծաղրեալ լիցուք միանգամայն նրբին նշմարողաց:

Եւ լաւ իմն լինի եթէ ի միտ բերցես թէ Սարգիս Վրդ. մի չէրաղ կանես, լաքին Փառք Աստուծոյ, Մինդ յեղբարցդ իմոց է Կաթուղիկոս եւ միւսնդ Պատրիարք, իսկ մեք ողորմելիքս ի յԱրքեպիսկոպոսութենէ ի Քորեպիսկոպոսութիւն կու բարձրանամք. չեղաք եւ չըհասաք ի չափ քղեղիդ եւ խմբիդ առաջի քո. Աստուած յայլ պէթէրէն պահէ:

Արդ թէ զինչ իցէ անցցէ, զի լաւագոյն է թէ լուրիցի քան թէ ասիցի. կէնէ այսու ամենայնիւ իմ աչաց լոյսն եւ Հրամանաւոր, իմ դըլխոյն թաղն եւ պսակն ես, եւ իմ սրբածանաց տեղին ես. ուստի հանդերձ նախասացեալ թէ ուրեքամբք կու ընդունիմ զայս աղբատ եւ փոքր Առաջնորդութիւնն. բայց այլով կերպիւ ոչ ընդունիմ. եւ եթէ Տեառնդ

հաճոյ թուիցի ասացեալս, առանց գտանելոյ եւ առարկելոյ զկիրճ իմն բնակին, շուտով յղել աղաչեմ զկոնստան չքեղ հանդերձ պէրաթիւ, եւ ընդ նոսին Եթէ կարելի իցէ նաեւ սուրէթ մի քոյոյ պէրաթին, զի աղքատս ընդ աղքատս բնակելով աղքատաբար անցուցանիցեմ զսակաւ մնացեալ կեանքն իմ, աղթելով միշտ վասն երջանկանալոյն քո լաւապէս ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ, եւ ողջ լեր ի Տէր ի յամերամ ժամանակս ի պարծանս մեր. բաւ է:

Նուաստագոյն ծառայ Տեառն Յիսուսի Քրիստոսի

Սարգիս Վարդապետ եւն.

Սիրելի եղբարց մերոց Գերյարգելեաց Գրիգոր, Կարապետ եւ Պետրոս աստուածաբան Վարդապետաց սիրով ողջոյն ընծայեմ ի Քրիստոս Յիսուս:

Տ. Կ.

Յատկացուցանիլ պիտոյ է եւ այս ինչ, զի ի յօրէ պէրաթին, զոր արարեր, առ մեզ հասանելի է իրաւունքն. թէ եւ աւելորդ իցէր Տեառնդ զայսմանէ գրելս, սակայն միտքս այս է, զի մի յետոյ վասն սակաւ ինչ իրաց ասելիս ինչ լինիցի:

Ի Թէքիրտաղ, 1758 ի Յուլիսի 27

Աստուծով հասցէ գիրս յԱսամպօլ, ի ձեռն Նորին Պատրիարքի Տեառն Յակոբայ Աստուածաբան Վարդապետի, ի բարին:

(Դիւան Ս. Ղազարու)\*

# 11

Գերապատիւ Տեառն Յակոբայ Նրբահանճար Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ եւ աստուածաբան Վարդապետի մեծի, խորին խոնարհութեամբ ընդ ողջունի եւ յարգումն ընծայեցի ի Քրիստոս Յիսուս

Պատուիրեալ էի աստ Աքամ Վարդապետին մեր եւ յետոյ զնոյն վերստին գրեալ նմա (ըստ որում եւ հանդիսապէհոսութեանդ եւս յուշ արարեալ յատկեղաբար), զի եթէ զմոխաթայի բանն եւ զառ մեզ դարձումն երկից խրամատեցեալ թեմից ոչ յանձին կայցէ Սրբազան Պատրիարք Վարդապետն, չլինի թէ եւ յատկապէս, առեալ բերցես առ իս զպէրաթն եւ զկոնստան Առաջնորդական, որ կարծեմ թէ Տեառնդ

\* Տես «Բազմապէս», 1984, 1-4, էջ 104, 36. 85:



է որ այնպէս յաջողեալն է, ըստ որում եւ կասկածելի ի սապիթլա-տէմոլթենէ վեհալուստրութեան քո թէ առնելոց իցես, քանզի յետ զիստելոյ յողմանց նշանաւոր արանց, եւ յետ խոստանալոյ մեղ դա-ռաջինն բազմիցս միջնորդական բերանով երկուց վարդապետաց քոց Պօղոսին եւ Կարապետին, եւ մանաւանդ զինի ինքն ասելոյ քոյ ճշ-մարտաբարբառ բերանով քով ինձ անմիջապէս ի վանքն Իւսկիւտա-րու, այժմ մինչ տեսեր զիս նաչարի կիսահաւան լինիլ սոյն աղքատ եսկիւտապոստանիս, ժխտեալ զբանդ զմիւրիդ (որոյ քոյրուն է 140 հա-զար ըստալ) պատճառեալ ես ինձ, եւ կամ յըսումն ալրոց չըջակայ առաջնորդաց, լսիստ բարի սիրելի եւ յարգելի եղբայր իմ, սակայն պատճառանքդ այդպիսի է՝ որքան է առ իս բազմանիւթ տեղի իմն, յորմէ արտահանին ինձ յոյժ պիտանաւոր քաղմանիւթ փօսելիք, բայց ոչ այժմ, ալ ի դիպուկ պահու եւ տեղւոյ մերձ վերջ մերձ:

Այլ առ այժմ մեծապատուութեանդ ասելիքս այս է միայն, զի գիտես որ մոռնալէր պազար էր բանս, թէ կու հաւանիմ եւ թէ ձեռք կու տայ ինձ: Իսկ որովհետեւ տէրութիւնդ ի դաշնացդ դարձար, եւ զմոլախաթայի ՃՀ (170) զուռուշն կու պահանջես յինէն, եւ գերիս թեմա, զոր վրնութեամբ բարձեր յԱռաջնորդութենէս յայմանէ, ոչ կամիս վերստին առ սա դարձուցանել պատճառելով զիրիճայն մահ-տեսի Սիմաւոնին եւ խօճայ Փարուխին, որ ամենեւին ոչինչ է այդ փաստ, զի նոքա եւս ոչ կամին թէ յինէն բարձցի եւ այլոց տրիցի: Այլ նորա լուսն իսկ պատճառն է երկտասնեակ դեղնեակն զոր լաւ դի-տես. գիտեմ եւ ետ, լուս լեր: Գիտեմ նաեւ խոստովանանք լինի Հրա-մանուցդ, զիմ պէրաթի գինն ինձ օժտեալ հռչակաւ, եւ ի նախըն-թացէն լաւապէս ոչ գիտեմ եօթանասունն թէ ութսունն: Եւ ասելս այս է, չիւնքի Հրամանուցդ զենն կու լինի, միւրիդ պակաս կու մնայ. մեղաւորս Հրամանուցդ գենն չեմ կամենար, ուրեմն որպէս յառաջն պիտոյ չէր ինձ սոյն Առաջնորդութիւնս, նոյնպէս եւ այժմ պիտոյ չէ, զի ոչ լաւականանայ ինձ Զ (6) եւ է (7) արամբ: Եւ ահա Ադամ Վարդապետն տակաւին յայդր է, ա'ռ ի նմանէ զպէրաթն եւ զկոն-տակն, եւ յում վերայ կանես արդէ, լաքին գայտ կու սորաչեմ, զի մի' դուցէ որպէս յառաջն՝ Թէքիրտաղը մանսուպունա իրթիքեալ իթ-մէզիլէ պրեպես դարդդ, ալ զքեա լթէ՝ Պէն անօղլումէն բուճու իթմէզիլէ, որպէս եւ է ճշգրտագոյն: Եւ ես Աստուծով զխորաճն ա-ռեալ կու ելանեմ աստի, որպէս եւ ծանուցի ամենեցուն: Բայց մին-չեւ ցզալն իմ մէկ գիրով Առաջնորդութիւն մի պատրաստեսցես ինձ ի քաց բարձեալ զպատճառական կրճիմսն ամենեւին: Զի թողում գայն, որ յօրէն յայնմանէ, յոր հրամանք բարեաւ Պատրիարք եղեր, մինչեւ ցայսօր զիս սահուն լերերուն պահեալ ի խորխորատէ ի խոր-խորատ դահալիթել ձկտիս, պէսպէս անուանակոտրութեամբ, որպէս յայտ է ամենեցուն:

Այլ զի՞նչ ասեմ առ այն, որ լրիւ չորս ամ եղեւ յորս ծառայա-բար ենթարկեալ քեզ համբերեցի խոնարհաբար, զոչինչ իմն գոնէ փոքրիկ մնաս հասուցեալ քեզ. որպիսի տառապանք մնաց զոր ոչ ջա-նացեր անցուցանել դու առ իս, զի գիտես զիրան չիք Պէրպէտեանց, զոր ինքեանք լու ի լու խոստովանին հրապուրէլ լինիլդ նոցա զինէն. զի՞նչ ասելոց իցես արդեօք վասն աքսորական գրոյդ վասն իմ, յերես քո վկայեալ Սամուէլ եւ Աթանաս Վարդապետաց, եւ զանց առնում զանցիցն Պալաթու եւ զայլոց մասնաւոր անցուածոց, զորս գիտես թէ ոչ գիտէի եւ ոչ գիտեմ: Եւ չորս քէսէ կէլիլով մանսուպ տուի իւրն կասես եղեր. անիծեալ լինիմ թէ ՌՄ (1200) զուռուշ կու բռնէ, եւ հազիւ թէ երկու ծայրն կու հաւասարի կէլիլն եւ կիտէն:

Իմ աչաց լոյս Հայր Վարդապետս, արդեօք ասեմ թէ զանց առ-նում, պարէ ի հարիւրէն մէկիկն ասեմ, սակայն օրհնեալ խաթրիկդ չի մնայ, զոյոյ պերճափառի մեծի հանդիսավեհութեան հազիւ թէ բաւական եկամուտ լինել արժան է բոլոր մէմալիքի մէհրուսէն, ոչ Ըստամպոլ եւ ոչ Երուսաղէմ կարէ համարժանաբար լիացուցանել զքեզ եւ ի վերայ այսց ամենայնի ամ յամէ Զ (6) տապրկիկ Սուրբ Երուսաղէմայ կու առնուս, ոչ գիտեմ վասն էր, թող զայլս զորս գի-տողը կասեն, եւ զիս կու կամենաս որ միշտ չբաւորութեամբ տառա-պիմ եւ բաւական խարճուլիս եւս կարօտ լինիմ ի հրճուումն քո. փէհ նէ՞ նազիք, քիւրտ գըղը օյնասըն չէլէպիմ էյլէնսին տէյի խաղ մի կու կանչեն, այս մեր բանն այլ նոյն սարասի է:

Իմա եւ գայս վերջաւորութեամբ, ես այլ այն Հօրն գաւակն եմ, ես այլ այն Վարդապետին աշակերտն եմ, հրամանքդ ի Սառայէ եւ ես ի Բէտուրայ չեմ: Վասն Աստուծոյ լինի, հերիք տալ, զի շատ անկար եւ կանկանիս յետեւես, լաւ չարիւր եւ վաւ չես աներ. հետեւա-պէս յիմ տեղս որ լինիս, վկայ լիցի Աստուած, զոնէ մէկ ժամ չես համբերեր. եւ յայս չափս հասուցանել պիտոյ չէր զբանն, զի յցեր եւ անցուցեր զչափն, եւ զայլ իրաւունս իմ Աստուծով ի դալն իմ յայդր լսելոց ետ. բայց ոչ ասելութեամբ, ալ սիրով եւ իրաւամբ, զի շատ նիւթ պայծառապէս յայս փոքրիկ թղթով ոչ կարէ բովանդակիլ:

Ուրեմն, եզր տալով դրուածոյս վերադարձեմ զոր ի վեր անդր ասացի. մինչ գայնս պայմանադրեալ թէութիւնս բարձեր, այսուհե-տեւ ինձ պիտոյ չէ սոյն Առաջնորդութիւնս, վայելեա դու եւ գայս ընդ այլոց որպէս զարփալըս իմն, եւ մեղ այլ Աստուած ողորմած է: Օրհնեալ լիցի աղքն Հայոց, եւ օրհնեալ լինիցին բարեպաշտօն իշ-խանքն մեր, եւ զու եւս ողջ լեր յամերամ ժամանակաւ ի պարծանս նոցա եւ յիմս նուաստի, որ եմ ամենաչնչին ծառայ Տեառն Յիսուսի

Սարգիս Վարդապետ եւն.

(Տ. Կ.)

Ո՞ր մնացին իմ տխրալի հողեկա այն քանը Իսկիլտարու օտա-  
յին մեծառոգիականը եւ առատականը, թէ ով եղբայր, այնքան բա-  
նին համար թէքլիֆ մի ունիմք մեր մէջն, միայն դու հաւանէ եւ  
յանձն առ զԱռաջնորդութիւնն, եւ այնպէս լինիցի, եւ ի վերակըրկ-  
ներն թէ սոյն պայմանօք կ'ընդունիմ, հրամանքդ այլ վերակըրկեցեր  
թէ այնքան դրամոյ համար թէքլիֆ չունիմք իրերաց հետն, թող  
այնպէս լինի:

Հայր սուրբ, ջվայելէր մեծութեանդ այսպիսի իրակութիւնը, եւ  
մանաւանդ դէպ առ մեղաւորս: Եւ այս խղճերս գիտեն թէ ես թեմե-  
րուն համար չեմ մնար կասեմ, զմիւս ցաւս չեն գիտեր:

Ի Թէքլիֆաւ, 1758 ի յՕգոստոսի ԺԶ (16)

(Դիւան Ս. Ղազարու)\*

## 12

Տեառն Տեառն Ստեփաննոսի սրբակրօն Աբրալի Հայոց  
Յարգումն եւ ողջագործումն ընդ Յիսուսաձիր ողջունի  
եւ սիրոյ ընծայեալ մատուցի ի Տէր

Մերթ ընդ մերթ յընկալնուն իմ դպատուական աւանդն երկնա-  
ձիր ողջունի քոյոյ պայծառութեան, ի ձեռն մտերիմ միակրօն հա-  
տակելոց քոց, նոյնն համարեալ լինիւր յաչս իմ իբր սիրայորդոր ըն-  
ծայ իմն բարեվայել եւ գուարթարար, եւ ի վեր քան զոսկի սոփերայ  
եւ քան զտպագիօն հնդկային. ուստի յաւերժ շնորհապարտ լինել դա-  
տեմ զքաղցրահամբոյր եղբայրսիրութենէ քումմէ անհատականէ, եւ  
խնդրեմ յԱնհատահոս աղբերէ սիրոյն առ ի յաւէտ պրկեալ պնդեալ  
անյոյս եւ անխղիւ պահել զչաղկապն իրերայս սիրոյ:

Եւ զգլխարդն քարեյարձող կացութեան Գերյարդելի պայծառու-  
թեան ձերոյ, եւ ընդ հովանեաւ ձերոյ պարած(ած)կեալ մաքրակրօն  
եղբարց միարանից՝ լսեմք միշտ ի քոյայնոց առժամայս աստանօր  
նշդեհացեալ երջանկափառիցն, որոյ վասն գուարճացեալ բերկրիմք  
հոգևով չափ եւս քան գեւս: Բայց me dispiace, զի Հայր Մկրտիչ Պետ՝  
սիրազունն իմ յատկեղ չէ՝ ի միջի, ոչ այդք առ ի խրախացուցանել  
զհամեղբայրութիւնն ձեր, եւ ոչ այսք առ ի արգահատել զառանձ-  
նականութիւնն իմ ճոխաբանութեամբ իւրով. բայց վշտագին յոյժ,  
զի որպէս ոգեւն յողունք, թէ նա ինքն իցէ առիթ՝ ցարդ եւս յամեց-  
ման եւ կատարունակման երկրորդ հատորի Բառարանին, եւ հաւա-  
տամ այնպէսն լինել, զի ի մանկական տիրոց հետէ մինչեւ ցայժմ  
խիստ շատ հաշարի է, որ ի փորձոյ գիտեմ, եւ կամի թէ յամենայն  
ուրեք գիւր հաշարի լինելոյն նշմարանքն ներտպաւորէ: Իսկ եթէ ար-

\* Տես «Բազմավէպ», 1984, 1-4, էջ 164, ծն. 85:

դէն լեալ իցէ դարձ նորա բարեաւ ի սուրբ մենաստանդ, աղդ արաս-  
ջիք նմա, թէ կաթողինն քո Սարգիս Վրդ. կարօտանօք ողջունէ դեք,  
եւ բաղձահարի իսկ՝ միւսանդամ տեսանել դեք, ուր եւ կամիցի նոյն  
ինքն Ամենայնուրեքն, եթէ հաճելի իցէ ինքեան:

Եւ զգլխարդն Պատրիարքականի փոփոխման տեղույս, եւ զիմ խըղ-  
ճալոյ ճողոպրելն յայնմանէ շնորհիւ Տեառն, թէ եւ հրաւիրումն յոր-  
դորումն եւ հրապուրումն իցէր չափազանցօրէն. եւս զմահուանէ Պայ-  
տեան [Նալեան] Յակոբկանն եւ զյաջորդելոյ նմա Գրիգոր Վրդ. ի  
ուրումն, ըստ իմս վարկման ցարդ եւս դրեալք են Պարծառութեան  
քոյ լիալիր, ուստի ոչ է ճահ երկրորդաբանել վերստին: Բայց սոյնս  
լինիցի մեծութեան քում արդեան novità, զի Աբրահամ Պետ Առաջ-  
նորդ Զմիւռնոյ աշխարհածուի, որ եւ էր սեռականադոյնն ի հակա-  
ռակորդս, մեծաւ հրաշափառութեամբ՝ Հաթի հիւմայիւնով եւ  
դրեա թէ հաւանութեամբ իսկ երկաքանչիւր կողմանց բոլոր աղգի  
մերոյ՝ աքսորեցեալ եղեւ ի բուն իսկ պաւառ իւր յԱստապատ, որոյ  
նաեւ տուտն քարչեաց եւ քարչէ տակաւին ընդ իւր հետեւաբար զինք-  
նանման զեղծադործս ոմանս: Այլ ի Տեառնէ եղեւ այս, եւ է՝ սքան-  
չելի յաչս մեր. քանզի Սրբազան Քահանայապետն Ղեւոնդիոս արադ  
արադ եւ յու ի յու պատժեաց զնոսա սքանչելապէս:

Եւ էֆիմէրտ գրեանքն իմ հասին առ իս թուով 195, եւ զծախան  
վճարեցի Հայր Զաքարիա սիրելոյն մեր, զտշ. 45, փրյ. 15: Եւ յոյժ  
յոյժ շնորհակալ եմ զձէնք՝ վասն ոչ անխաջելոյ վասն իմ զաշխա-  
տանս ձեր. բայց զլէսն շնորհակարութեան իմոյ պահեալ ունիմ առ  
իս առ ի վերահատուցանել Տեառնդ՝ մինչ ի թէսկէրէնջ նշանագրե-  
ցեալ դրեանքն հասցեն առ իս:

Հանուրց մաքրափայլ կրօնաւոր եղբարց կրօնաստանիդ սրբոյ,  
ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, ուրոյն ուրոյն ողջոյն եւ օրհնու-  
թիւն ընծայեմ ըստ պատուոյ եւ ըստ արժանաւորութեան ի Քրիստոս  
Յիսուս, եւ սրբազան աղօթից նոցին ծարաւելեաց կարօտիմ ի սպառ,  
եւ մնամ յաւէտ կաթողնեալ եւ սրտակաթ ի սէր տեսութեան ձերոյ,  
որ եւ եմ փակ

Նուաստագոյն ծառայ Տեառն

Սարգիս Վրդ. եւն.

Ի Սուրբ Լուսաւորիչ Եկեղեցին,

որ ի Կոստանդինուպոլիս

1764 Հոկտ. 8

(Յ. Գ.) Տեառն Հայր Մատթէոս եւ Տեառն Հայր Վրդանէս արհիա-  
պանծ վարդապետաց սերտ սիրով ողջոյն եւ յարգումն ըն-  
ծայեմ ի Քրիստոս Յիսուս:

(Դիւան Ս. Ղազարու)

## 13

Տեառն Տեառն Ստեփաննոսի սրբակրօն Աբբայի Գերյարգելոյ՝  
ուղերձեալ նուիրեսցի տէր անկեղծական, յեռեալ ընդ ող-  
ջունի Տեառնականի, ի Հոգին Սուրբ

Նաեւ՝ ընդ Սրբազանի Տեառնդ եղելոց մաքրափայլ գլխուց համ-  
եղբայրութեան՝ իմս սրտի բաղձալեաց անձկալեաց եւ սիրելեաց ի  
Տէր Յիսուս Քրիստոս՝ ըստ բարեկամելու պաշտաման պարու եւ  
աստիճանի, ձօնեսցի ընծայեսցի եւ մատուցի պատկանակիլ յար-  
գումն, պատիւ եւ մեծարումն՝ ի ծերադուլից անտի միջեւ ցմանկա-  
գոյնս ուրոյն ուրոյն. եւ ապա յանձն արարեալ զիս ի դերամաքուր  
աղօթիս ձերս հաճոյականս՝ մնամ բաղձահարեալ կաթողնապէս, ար-  
ձակելով ի վայրէ աստի բարիլոնականէ զտապաշունչ հառաչմունս  
առ ձերային քանթօնն փարատիզոյ:

Եւս՝ դարբելիճակ ձերայնոյ կելոյ զհոգակն փարելի ի ձերայ-  
նոց ոմանց յարգեցելոց լսեմք աստանօր քաղմիցս, եւ ի հրճուանս  
հոգւոյ ճ(ո)խանամք լիալիւր, չվերջանալով երբեք յըմբերանելոյ  
զձէնջ բարբառնջողաց քառաց զթունաթորմ վեղուտ, թէպէտ եւ ըզ-  
ջուրս մաքրապայծառս (որպէս ասեն) չզօրէ պղտորել վաքլաքանք  
գորտանց բիւրաւորաց: Ուստի ըստ այսմ մասին՝ կցորդեալ զիս ընդ  
այլս բարեբարոյս, որք են ճանաչողք գնոյ եւ արդիւնաւէտ աշխա-  
տասիրութեան ձերոյ, մաղթեմ աղօթիւք ի Տեառնէ Յիսուսէ, զի ի  
յօգուտ ուղղափառ հաւատոյ, եւ ի յօրինակ քարի վարուց, արասցէ  
զձեզ յաւէտ արմատաւորիլ, բարդաւաճիլ, բարունակաւորիլ, ծաղկիլ  
եւ պտղաբեր լինիլ ի բարւոք կրօնաւորութեան ձերում, եւ տեղի  
պանծացման՝ յամենայն կողմանց խղճացելոյ եւ յատկազուն այցե-  
լութեան Տեառն կարօտեցելոյ Աղգին մերոյ. ամէն:

Վերջապէս, կամ է ինձ յուչ առնել մասնաւորաբար Գերամեծա-  
րութեան քում աղերսանօք, քանդի ողորմած հոգի հացագործ մահ-  
տեսի Զոհրապի թոռնուկ զտիրացու Մկրտիչ պատանեակն երեքտա-  
սանամենի, առողջ եւ բարեսեւիլ, ուշիմամիտ եւ համեստաբարոյ,  
սիրատեղէ կրօնաւորականի կացութեան եւ սրբոյ ուսման, զոր ունիմ  
արդէն առ իս յուսուցանել զարհեստն քերականութեան, մերձ գոլով  
ի լրացուցանել, ուրեմն զսոյնս զայս՝ համահաճութեամբ ծնողացն  
եւ աղերսանօք իմս գերանուատութեան, կամիմ՝ զի հաճեսցիս դը-  
թածապէս ընկալնուլ ի հոգեւոր որդեգրութիւն քեզ, եւ յեղբայրակ-  
ցութիւն համայն սրբակրօն միաբանից, որպէս եւ զայլս բազումս:

Եւ ակն ունիմ թէ հաճելի լինելոց իցէ առաջի Գերամեծարու-  
թեան քոյ սոյն այս աղերս իմ եղակի, եւ ընկալնոց եւս իցես զայն  
իբրու զիմ աղիս, եւ փոխան իմ պատանդ եւ առհաւատչեայ: Ուստի

ի նշան քոյոյ բարեհաճութեան՝ սպասեալ մնամ ես, ընդ իս եւ ծնողք  
նորին՝ ընկալնուլ զստորասական դիրն, ձեռամբ Հայր Զաքարիա յար-  
պեցելոյն, որ եւ ընդ իս աղաչակից է որքան առ սոյն խնդիր՝ Գերա-  
յարգութեան քում, բայց մեծաւ պարտաւորութեամբ արժան է նմա  
առնել զայս շնորհ տանն Զոհրապեան, յորմէ նաեւ նոյն ինքն առ  
այդ սրբարան երբեմն ընծայեցեալ եղեւ ի մանկական հասակ. ապա  
թէ ոչ, ո՛ր պիտէ, դուցէ թերեւս այժմ, կամ սեղանաւոր իցէր աստ  
ի Փռան, կամ մեծ վարպետ ի Ունիտափան: Ներէ աստանօր ինձ Հայր  
Զաքարիայն իմ, այսպիսի կարելարանութեանս, որպէս եւ բարեմը-  
տութիւն ձեր, քանդի զմէնջ բնաւից կարէ ասել աս կերպ կարելապէս:

Հուսկ յետոյ իմ աջ աջաց լուսոյ եւ իմ յատկեղ ախրաղնոյ Տեառն  
Մկրտչի գերիմաստ Վրդ.ի, ընդ որոյ ոչ պակաս քան զայն՝ Հայր  
Վրդանիսի եւ Իգնատիոսի, բազմաւ կարօտիւ գթիսուածիր ողջոյնն  
ընծայեմ, եւ սրբազան աղօթից կարօտիմ յոյժ եւ յոյժ:

Մնալով պատրաստական եւ պար(տ)աւոր ծառայ ձերում սիրե-  
լութեան

ամենանուատ ծառայ Տեառն  
Սարգիս Վրդ. եւն.

Ի Կոստանդինուպօլիս

1768 Սեպտ. ԻԶ (26)

(Դիւան Ս. Ղազարու)

## 14

Գերյարգելի մեծի Ստեփաննոս Աբբայի

յոյժ կաթողին սիրով ողջոյն եւ յարգումն ի Քրիստոս Յիսուս

Առ ժամս չունելով իմ գերկար ժամանակ վասն բազմութեան  
դրադանաց, զայս միայն համառօտակի յուչ առնեմ սիրելութեան  
քում, հանդերձ աղերսանօք, զի մի՛ նահանջիցիս կրելոյ վասն իմ  
գայսքան աշխատանս յաղազս սիրոյ Տեառն: Քանդի եթէ մերթ ընդ  
մերթ յղիցէ առ քեզ ի Վիէնայու էրարտօ Ռիէշ կոչեցեալ անձն, եր-  
բեմն հաղար զուռուչ, երբեմն երկու հաղար, եւ կամ մերթ աւելի  
կամ պակաս, առեալ զայնս պահեսցես ի քեզ, զի յիմ կողմանէ դա-  
լոց է, եւ իմ է դրամն այն, եւ այս իրակութիւնս լինելոց է միջնո-  
ղութեամբ սիրելի բարեկամին մերոյ Փէթրօ Զաքարիային. եւ Աս-  
տուծով ի ժամանելն մեր ի կողմանս այլոսիկ, ուր եւ առաջնոր-  
դեսցէ Տէր, գրեցից, կամ փօսեցայց ընդ քեզ թէ զինչ լինելոց են  
այդոքիկ դրամք իմ: Եւ միայն այժմուս զաղօթս խնդրեմ ի բոլոր

սրբազան Միաբանութենէ ձերմէ, որով անխտանդ հասեալ մեր այդր, արժանի գտայց տեսութեան համօրէն մաքրութեան ձերոյ, եւ զգիրս զայս թաքուն պահելով, ողջ լերուք ի խնամս Տեառն. բաւ է:

Նուաստադոյն ծառայ Տեառն  
Սարգիս Վրդ. եւն.

Ի Կոստանդնուպօլիս  
1772 յՕգոստոսի ԻԲ (22)  
(Դիւան Ս. Ղազարու)

## 15

Տեառն Տեառն Ստեփաննոսի Գերարդելի Աբրայի  
սիրով եւ կարօտիւ ողջոյն ի Քրիստոս Յիսուս

Ծանիցէ վսեմութիւնդ, զի իբր Կրկու ամսով յառաջ երկու դիր՝ մի գկնի միոյ ի Կոստանդնուպօլսոյ յղեցի յարգութեանդ, վասն դժբաժնի իմոյ, որ անցանելոց էր այդր, եւ ի քեզ հասանելոց փոստովն Վիէնայու, ձեռամբ Փէթրօ Զաքարիային, մերթ հազար հինգ հարիւր զուռուշ, եւ մերթ աւելի կամ պակաս. որոց բովանդակն լինելոց էր իբր տասնեւմէկ հազար զուռուշ, կամ սակաւ ինչ աւելի կամ պակաս, եւ ալն ունիմ թէ զայլմանէ ծանուցանելոց ես ինձ ի Հոսմ, ի ձեռն գրութեանդ մի ըստ միովէ՝ հաշիւն հանդերձ:

Իսկ եթէ զարդենական կացութենէ մերմէ կամիս տեղեկանալ, ծանիր, զի ըստ հաշուի հին տօմարին, ի տասնեւութ աւուրն Սեպտեմբերի ելեալ մեր ի Կոստանդնուպօլսոյ, եւ ի միջոցի քսանեւորս աւուրց՝ անվնաս հասաք ի նաւահանդիստն Մարչիլիայու, եւ այս երեք օր է որ կամք ի Նազարէթն նորին, եւ ըստ ծիսի տեղույս մինչեւ ի լրանալ երեսուն աւուրց՝ պարտիմք մնալ աստ, եւ ոչ աւելի:

Եւ գկնի ելանելոյ մեր ի Նազարէթէն, կամիմ իբր հնգետասան աւուրս մնալ աստ ի Մարչիլիայ, առ ի շրջիլ ի քաղաքի եւ սակաւ ինչ գրօսնուլ, եւ ապա եթէ Տէր կամեսցի ելանելոց եմք ի ճանպարհ կամ ծովու եւ կամ ցամաքով, աճապարել ի Լիկուրնայ, եւ կամ ի Զիւլթայ Վէլքիա, եւ անտի Աստուծով ի Հոսմ:

Եւ բաց յայցանէ առ աշտմս զայլ ոչինչ ունիմ գեկուցանելոյ երջանկութեանդ, միայն թէ զաղօթս խնդրեմ ի մաքրակրօն եղբայրութենէ ձերմէ, առ ի տեսանել միւսանգամ զմիմեանս, եւ հրճուիլ Տերամբ:

Նաեւ ի մէջ գրոյս եղեալ գիրն հասուցես Սեդրոսեան Յօհաննէս աղային, ուր ուրեք եւ իցէ:

Վերջապէս համայն միաբան եղբայրք մեծաւ կարօտիւ ողջոյն սիրոյ ընծայեմ, ընդ որոց նաեւ Փարիզեան մահաւորի Ստեփանին, առ որ ունիմ խօսիլ վասն անցիցն Ասկէրեան Յարութիւնին: Ողջ լեր ի Տէր. բաւ է:

Ընդ իս եղեալ Հայր Յօհաննէս աշակերտն իմ մեծաւ յարգանօք ողջունէ զձեզ:

Ամենանուաստ ծառայ Տեառն Յիսուսի  
Սարգիս Վրդ. եւ Արքեպիսկոպոս  
Կոստանդնուպօլսեցի

Ի Նազարէթն Մարչիլիայու  
1772 ի Հոկտեմբերի ԺԵ (15)

Հրատարակեց՝ Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԻԱՆ

## Résumé

NOUVEAUX MATERIAUX  
CONCERNANT L'ARCHEVEQUE SARGIS SARAFÉAN

P. SAHAG DJEMDJEMIAN

A la suite de l'étude du P. Djemdjemian («Bazmavep», 141 (1983), p. 132-173), quinze documents sont publiés ici dont quatorze inédits et un (N° 4) édité déjà «ad usum privatum». La plupart de ces documents sont conservés dans les archives de la Propagande, les autres dans les archives de St. Lazare à Venise. Ils contiennent des lettres adressées par l'archevêque Saraféan au Pape Benoît XIV, à l'Abbé Général des Pères Mekhitaristes Step'anos Melk'onean, à la Congrégation de Propaganda Fide, au Patriarche arménien de Constantinople Hakob Nalean, aussi qu'une lettre de l'archevêque contemporain Vrt'anēs Step'anean à la Sainte Congrégation.